ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 1
№ՀՄԱԱՊՁԲ-26-4/4-1 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան 27.04.2026թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Կ. Բրուտյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Գնորդ), մի կողմից, և «ՈԼՎԵՐԻՆ Ե.Ա.Դ.Գ.» ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն՝ Ա. Ծատուրյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա՝ այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, հիմք ընդունելով 24.03.2026թ. կնքված № ՀՄԱԱՊՁԲ-26-4/4-1 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.16 կետը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն Համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին:

1. Համաձայնագրի առարկան

1.1 Սույն Համաձայնագրով Վաճառողը պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով և ձևով, Համաձայանագրի №1 Հավելվածով՝ նախատեսված ժամկետներում և ծավալներով Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին որպես սեփականություն հանձնել Պայմանագիրի №1 Հավելվածով նախատեսված տեսակի և որակի ապրանք (այսուհետև՝ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար:

2. Համաձայնագրի գինը և վճարման կարգը

2.1 Սույն Համաձայնագրով Վաճառողի մատակարարած Ապրանքի միավորի գինը ներկայացված է սույն Համաձայնագրի №1 հավելվածում: Համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է 5 921 520 (հինգ միլիոն ինը հարյուր քսանմեկ հազար հինգ հարյուր քսան) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, Ապրանքի գրանցման հետ կապված, ինչպես նաև Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

2.2 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարումը կատարում է Պայմանագրի 3.3 կետով և սույն համաձայնագրի N 2 հավելվածով նախատեսված վճարման ժամանակացույցով սահմանված կարգով:

3. Այլ պայմաններ

3.1. Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Ապրանքի մատակարարման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3. Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4. Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, կազմված է 2 էջից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն Համաձայնագրի №1 և №2 հավելվածները հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը:

4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունը:

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	«ՈԼՎԵՐԻՆ Ե.Ա.Դ.Գ.» ՍՊԸ
ք. Երևան Բագրևանդի 5	ՀՀ, Արմավիրի մարզ, Փարաքար, Օրբելի 12, 12/2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	«Էվոկաբանկ» ԲԲԸ
Հ/Հ 900011024537	Հ/Հ 16600625212500
ՀՎՀՀ 02522157	ՀՎՀՀ 01306876
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ	Տնօրեն
Կ. ԲՐՈՒՏՅԱՆ	Ա. ԾԱՏՈՒՐՅԱՆ

Հավելված N 1
N ՀՄԱԱՊՁԲ-26-4/4-1 համաձայնագրի

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/Հ	Գնման առարկայի անվանումը	չ/մ	Քանակը	Միավորի գինը /ՀՀ դրամ/	Ընդհանուր գումարը /ՀՀ դրամ/	Մատակարարման ժամկետը 2026թ.
1	Ռազմական սաղավարտներ (Հատուկ նշանակության սաղավարտ FAST)	հատ	120	49 346	5 921 520	համաձայնագիր կնքելուց հետո, ոչ ուշ քան 30.04.2026թ.:

Հավելված N 2
N ՀՄԱԱՊՁԲ-26-4/4-1 համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Հ/հ	Գնման առարկայի անվանումը	CPV կոդը	Նախատեսվում է ֆինանսավորել 2026թ., ըստ եռամսյակների, բայց ոչ ուշ, քան 25.12.2026թ.		
			2-րդ եռամսյակ	3-րդ եռամսյակ	4-րդ եռամսյակ
1	Ռազմական սաղավարտներ (Հատուկ նշանակության սաղավարտ FAST)	35811250/501	**5 921 520**	**5 921 520**	**5 921 520**

* Վճարման ենթակա գումարները ներկայացված են առողջական կարգով:

ԳՆՈՐԴ
ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Գ. ԲՐՈՒՏՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ
«ՈԼՎԵՐԻՆ Ե.Ա.Դ.Գ.» ՍՊԸ
Տնօրեն

Ա. ԾԱՏՈՒՐՅԱՆ